ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2011 թվականի թիվ 38-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ՌՈՒԲԵՆԻ ՍԵՐՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <ԶՈՐԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ> ՓԲԸ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Բաժնետիրական ընկերությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <թ> ենթակետով,ՀՀ Տավուշի մարզպետի 2007թվականի հունվարի 29-ի <ՀՀ Տավուշի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր պոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների տնօրենների ընտրության /նշանակման/ մրցույթի և ատեստավորման ընթացակարգը հաստատելու մասին> N 7-Ն որոշմամբ սահմանված հավելված 1-ի 60-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության <Զորականի գյուղական բժշկական ամբուլատորա > փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2011թ. մարտի 29-ի թիվ 3 որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Սուսաննա Ռուբենի Սերոբյանին 2011թ. ապրիլի 1-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության < Զորականի գյուղական բժշկական ամբուլատորիա> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր չորս տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ.ապրիլի 1
ք. Իջևան